

ՎՐԱՅ ԿԵՆՏՐՈՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանաստեղծ Ակակի Ծերեթելու նոր յօդուածները հայերի մասին:—Կրկին «վրացի-լուսաւորչականների» հարցը:

Ինչպէս մեր նախորդ յօդուածում ասել էինք, վրաց նշանաւոր, ծերունի բանաստեղծ Ակակի Ծերեթելին, մի կողմ ձեռքով իր բաղցրալուր քնարը, զբաղուած է այժմ այլևայլ հրապարակախօսական վէճեր սարքելով: Յաջողութիւն չը գրտնելով իր նոր ստեղծած թատրոնական քննադատի դերում, մի դեր, որի համար նա առատօրէն ու արժանապէս վայելեց «Տնօրէիս-Փուրցելի»-ի կծու ծաղրն և անխնայ յարձակումները, պ. Ծերեթելին գտաւ իր համար դարձեալ մի նոր գործ. նա չափաւր զբաղուած է այժմ... հայոց հարցով:

Մեր ազգին պ. բանաստեղծը նուիրեց «Իվերիայի» էջերում (№№ 248 և 258) երկու մեծ ֆելիէտոն, որոնցից առաջինում նա սաստիկ գովում է հայերին և աւելի սաստիկ պախաւրակում վրացիներին, իսկ երկրորդում անտեղի և անմիտ կերպով դատապարտում ու զրպարտում նոյն իր գոված հայերին... Պէտք է ասած, առաջին անգամը չէ, որ պ. Ծերեթելին գրիչ է վերցնում հայերի դէմ. դեռ ևս սրանից հինգ տարի առաջ նա տպեց իր «Կրեբուլի» (ժողովածու) ամսագրում մի ընդարձակ, անհիմ մեղադրանքներով լի, գրութիւն, որ ջարդ ու փշուր եղաւ մօր կողմից վրացի պրոֆեսսոր պ. Ն. Մարբի հօգոհարուածների տակ («Новое Обозрение» լրագրում): Պ. Ծերեթելին փորձել է այնուհետեւ խայթել հայերին նաև իր ոտանաւորների միջոցով, բանաստեղծօրէն...

Բայց դառնանք պարոնի նորագոյն աշխատութիւններին:
«Հայերն այնքան են սիրում—ասում է նա իր «Դառն մտածողութիւններ» յօդուածում—իրանց ազգութիւնը, որ յաճախ՝ յափշտակուած չափազանց երեակայութեամբ՝ մոռանում են արդարութիւնը. իւրացնում են այն, ինչ որ իրանցը չէ: Օրինակ՝ ասում են թէ «նոյն իսկ Վրաստանի կենտրոնը, սիրտը, հին Հայաստանի մասն է», թէ «վրաց բերդերն ու պալատները հայոց թագաւորների կառուցածն են», թէ «վրաց գրերը Մեսրոպը գտաւ» և այլն: Եւ միթէ նրանք չը գիտեն, որ այդ բոլորը սուտ է. լաւ էլ գիտեն, բայց այնքան են սիրում իրանց ազգը, որ ուզում են օգտուել ոչ միայն ճշմարտից, այլ և ստից: Փնփնակ և պատիւ նրանց մոլեռանդութեան... Իսկ մենք, ինչի՞ արժանի ենք մենք վրացիքս... բողկի և հորթի գլխի (արհամարհանքի)...

Պ. Ծերեթելին իր «Դառն մտածողութիւններ» մէջ համեմատութիւններ է անում երկու հարևան ազգերի մէջ և վրացիների նախանձախնդրութիւնը արծարծելու համար նախապատուութիւնը շարունակ հայերին տալիս...

Գանք հիմայ պարոնի երկրորդ յօդուածին:

Սրանից երկու տարի առաջ, ինչպէս մենք իր ժամանակին գրեցինք «Մուրճում», «Իվերիա» լրագրում սկսուեց մի նոր շարժում՝ Վրաստանում ապրող վրացախօս հայերի վերաբերութեամբ: Լրագիրը յայտնում էր այն զարմանալի կարծիքը, թէ ամեն մի հայ, որ դժբաղդութիւն է ունեցել կորցնելու իր մայրենի լեզուն և խօսում է վրացերէն—այլևս հայ չէ... Նա վրացի է, թէև կրօնով լուսաւորչական: Այդ իր անհեթեթ գաղափարներն վրայ հիմնուելով, «Իվերիան» պահանջում էր որ վրացախօս հայերի եկեղեցիներում ժամակարգութիւնը, ընթերցանութիւնը և քարոզը կատարուեն անպատճառ վրաց լեզուով և այդ նոր համայնքը ճանաչուի էջմիածնի կողմից իբրև «վրացի-լուսաւորչական» կամ «վրացի-գրիգորեան»...

Պ. Ծերեթելին այժմ նորից վերականգնում է այդ մոռացուած, նոյն իսկ վրաց մամուլի մեծամասնութեան կողմից հաւանութիւն չը գտած հարցը: Մենք անհրաժեշտ ենք համարում բառաբար առաջ բերելու այստեղ մի երկու կտոր նրա այդ յօդուածիցն էլ. «Վրացուն ասում են՝ դու այն չես, ինչ որ ես (կաս), այլ պիտի լինես այն, ինչ որ ես եմ, որովհետև—դու իմ հաւատիցն ես: Եթէ ասածիս չէք հաւատում, հարցրէք Վրաստանում գործող հայ քահանաներին և գրողներին, որոնք զբաղուած են վրացի-լուսաւորչականներին հայացնելու գործով: Ինչ արդարութիւն է արդեօք այդ պարոն-

ների արածը, երբ նրանք՝ տիրանալով մեր աշխարհին մի քաղաքական սխալի (?) շնորհիւ, չեն բաւականանում լոկ նիւթապէս մեզ ստրկացնելով, այլ աշխատում են նաև սեպհակահայցնել մեր եղբայրակից վրացիներին, որոնք պատահամար նրանց դաւանութիւնն են ընդունել, այսինքն վրացի-լուսաւորչական են դարձել։ Ուրեմն դրանք ուզում են գտնել այդպիսով մեր աշխարհում այն, ինչ որ կորցրել են ուրիշ տեղ։ Իսկ մենք այդ գործին նայում ենք բոլորովին անտարբեր և ոչինչ աշխատանք չենք թափում։ Վրաստանում ապրում են 210,009 լուսաւորչական և երևակայեցէք ինչպիսի բարոյական տանջանք պէտք է կրէ դրանց ահագին մեծամասնութիւնը, որ հայերէնից ոչինչ չի հասկանում և որի ուղեղը չարչարում են եկեղեցիներում և ծխական դպրոցներում (?) նրա համար բոլորովին անհասկանալի լեզուով։ Վրացերէն լեզուի այդօրինակ հալածումը առաջ եկաւ հայ ազգասէրների քաղաքական ձգտումից, ձգտում, որ սկսուեց նախ իրանց գրականութեան մէջ և ապա անցաւ վրացի-գրիգորեանների եկեղեցին, ուսումնարանը, ընտանիքը և մինչև իսկ գերեզմանատունը։ Բայց մեր աշխարհի սիրահար հայ ազգասէրների ցնորքը պէտք է համարել փուչ և անպտուղ»։

Այնուհետև յօդուածագիրը, զոհ դառնալով մի տարօրինակ թիւրիմացութեան, գործում է մի արդարև «փուչ ու անպտուղ» և միևնոյն ժամանակ ծիծաղելի, դոնկիխոտական յարձակում իր ասնքան ատելի «ազգասէրների» դէմ։ Ահա թէ բանն ինչու՞ն է։ Սրանից մօտ 20 տարի առաջ թաղուեց Թիֆլիսի Վանքի եկեղեցում, հիւսիսային պատի տակ, վրաց էրէկլէ (չերակլ) թագաւորի հարս հայազգի Մարիամ Մելիք-Աղամալեանը (երևանցի)։ Նրա գերեզմանի գլխին, պատի վրայ, փորագրուած է հանգուցեալի ով լինելը՝ հայերէն, վրացերէն և ռուսերէն լեզուներով։ Հայերէն արձանագրութիւնը գրաբար լինելով, էրէկլէն կոչուած է «արքայ», որպիսի բառը, ինչպէս յայտնի է, աւելի սովորական է մեր հին լեզուում։ Պ. Ծերեթելին, այցելելով մօտերս յիշեալ եկեղեցին և կարդալով այդ արձանագրութիւնը—ծերունի բանաստեղծը աւարտել է իր ուսումը Պետերբուրգի համալսարանի արեւելեան ֆակուլտետում—սաստիկ վիրաւորուել է, կարծելով թէ «արքայ» նշանակում է ոչ թէ «թագաւոր» (այդ երկու բառը նա ընում է հայերէն), այլ «մթաւարի», այսինքն իշխան, կառավարիչ, պետ և այլն...

— Ա՛յ, քեզ խաթարալա...

Ախր ի՞նչով են մեղաւոր, յարգելի պարոն, հայ «ազգա-
սէրները», երբ դուք ձեր 40 տարի առաջ սովորած հայերէնը
բոլորովին մոռացել էք...

Կրճկ է ու պատիժ, էլի...

S. ՓԻՐՈՒՄԵԱՆ